

ԿԱՏՈՒՆ ԱՆՁՐԵԿԻ ՏԱԿ

Հեմինգուեյի ստեղծագործություններում տիրապետող թեմաներից է պատերազմը և անհատը պատերազմի ժամանակ: Նրա գրականության մեջ այս թեմաների օրգանական շարունակություն են կազմում հետպատերազմյան կյանքի և «կորած սերնդի» մասին պատմող պատմվածքները: Այդ պատմվածքներում նկարագրվում է այն ժամանակաշրջանը, երբ մտավորական ամերիկացիների ստվար խմբեր մեկնում էին Եվրոպա: Այդ արտագաղթն այնքան նյութականի հետ կապված չէր, որքան որ փախուստ էր սեփական դատարկված ներաշխարհից, հոգեկան աղքատությունից, իմաստագրկված ներկայից: Այդ մարդկանց համար բնականության վայրի փոփոխությունն ավելին էր, քան հասարակ քմահաճույքը: Նրանց համար փախուստն անցյալից դեպի Եվրոպա թվում էր փրկության միակ ելքն էր: Սակայն կորցնելով կապն անցյալի հետ նրանք կորցնում էին իրենց իրենց:

Այդպիսի ծակատագրերով մարդկանց շատ կերպարներ ունի Հեմինգուեյը: Նրա հերոսներն ուզում են մոռանալ իրենց ապրումները, փորձում են իրենց ներսում խեղդել կարոտն ու կյանքի անորոշությունը, նրանք հաճախ փախչում են մարդկանցից դեպի մենակություն, հաճախ էլ փորձում են փրկություն գտնել ընկերության, խմիչքի, անվերջանալի տեղափոխությունների, ցլամարտի և սիրո մեջ: Հեմինգուեյան հերոսների ամայացած կյանքում կարծես, թե փրկություն պիտի դառնար սերը: Սակայն սերն ինքն էլ մենակության մեջ է և ինքն էլ փրկվելու կարիք ունի: Սերն էլ արդեն կորցրել է իր ուժը, սպառել է ինքն իրեն մեծ ու փոքր հյուրանոցներում, թանկարժեք և էժանագին ռեստորաններում, կորցրել ազնվությունն ու մեծահոգությունը («Ֆիեստա», «Շատ կարճ պատմություն», «Սպիտակ փղեր» «Կատուն անձրևի տակ»): Առհասարակ Հեմինգուեյի ստեղծագործություններում գրեթե բացակայում են երջանիկ սիրո պատկերները, սիրո պարզևած ուրախությունը: Եթե այն անգամ կա էլ, ապա միայն անցյալում է, այն երբեք հավերժական չէ, այն կամ արագ ավարտվում է, կամ կործանվում պատերազմի թոհուրեհում:

Այդպես է, օրինակ, «Շատ կարճ պատմություն» փոքրիկ պատմվածքի հերոսների մոտ: Բուժքույր Լյուզի և վիրավոր ամերիկացու «հիվանդանոցային սիրավեպը» սկզբում թվում է այնքան վեհ, թվում է, թե այդ զգացմունքն այնքան ուժեղ է, որ կհաղթահարի ժամանակի բոլոր դժվարություններն ու խոչընդոտները, կհաղթահարի պատերազմն ու բաժանումը: Բայց տեղի է ունենում ճիշտ հակառակը. միասին լինելու համատեղ երջանկությունը մեկը փոխում է պատա-

հական կապով և ձեռք բերում հիվանդություն, մյուսը փոխում է կյանքի հարմարավետությամբ: Պատճառն այն չէր, որ նրանք իրար չէին սիրում, ամբողջ ողբերգությունը հենց այն էր, որ իրար սիրելով հանդերձ նրանք իրենց մեջ ուժ չգտան պայքարելու իրենց սիրո համար, պատերազմը բթացրել էր մարդկանց հոգիներն ու զգացմունքները, ավելի հեշտ էր սերը զոհել, քան սիրո համար պայքարել:

Այս պատմվածքն ու «Հրաժեշտ զենքին» վեպն ունեն սյուժետային նույն կառուցածքը, այստեղ էլ նկարագրվում է բուժքոչ ու վիրավոր զինվորի «հիվանդանոցային սիրավեպը», սակայն ի տարբերություն Նախորդների, այս վեպի հերոսները կարողանում են հաղթահարել ամեն ինչ և լինել միասին:¹ Նրանց կենսական ուժն ու միասին լինելու ցանկությունը կարողանում է դիմակայել պատերազմին:

Զիրականացած ցանկությունները, մարդկային չստացված ճակատագիրը, պատերազմի ամեն բան քայքայող ուժը, մեռած սիրո հետքերը, այս ամենը բերում են անհատի հոգեկան մենակությանը:

Հեմինգուեյի արձակը, որպես կանոն, շատ զուսպ է, այնտեղ բացակայում են մարդկային էնոցիաների կամ տառապանքի ուղղակի նկարագրությունները: Հեմինգուեյի կարծիքով գրողը միշտ չէ, որ պետք է ուղղակի ձևով գրի այն ամենը, ինչ ուզում է հասցնել իր ընթերցողին, նա կարծում էր, որ շատ բան կարելի է և չասել, բաց թողնել, որպեսզի ընթերցողը ինքնուրույն հասկանա: Եթե «լավ գիտես, թե որ մասն ես բաց թողնում», ապա ընթերցողը կհասկանա, որ «գրվածի հետևում կա դեռևս չբացահայտվածը», և նա ինքը կբացահայտի, ինքնուրույն կլրացնի բաց թողնվածը: Այլ կերպ ասած, Հեմինգուեյի պատմվածքներում կատարվող գործողություններին զուգահեռ, կա նաև իմաստային երկրորդ պլան, կա ենթատեքստ: Հաճախ այդ երկրորդ պլանն է, որ իր մեջ պարունակում է պատմվածքի բուն, իրական իմաստը: Այս գրելաոճն առկա է Հեմինգուեյի գրեթե բոլոր պատմվածքներում:

Հոգեկան ապրումների ու զգացմունքային վիճակների մասին նկարագրություններ չունենալով հանդերձ Հեմինգուեյի պատմվածքները խիստ հոգեբանական են, պարզապես այդ հոգեբանությունը խորը թաքնված է: Այն հնարավոր է ընկալել միայն պատմվածքի վերը նշված երկրորդ պլանը բացահայտելուց հետո միայն:

Վերը նշված բոլոր դիտարկումների լավագույն օրինակն է «Կատուն անձրևի տակ»² փոքրիկ պատմվածքը: Հեմինգուեյը երկխոսությունների անգերազանցելի վարպետ է, նրա պատմվածքներում քիչ տեղ է հատկացված պատ-

¹ «Շատ կարճ պատմություն» պատմվածքը «Հրաժեշտ զենքին» վեպի հիմնական աղբյուրներից է եղել:

² Սուաջին անգամ լույս է տեսել «Մեր ժամանակը» ժողովածուում:

մողական մասին և մեծ մասամբ գերակշռում են երկխոսությունները: Սակայն Հեմինգուեյին այդքան հատուկ երկխոսություններն այս պատմվածքում զարմանալիորեն քիչ են:

«Կատուն անծրևի տակ պատմվածքը» ունի ևս մեկը տարբերվող հատկանիշ: Հեմինգուեյի պատմվածքներում կանացի կերպարները մեծ մասամբ երկրորդ պլանում են: Ընդունված է համարել, որ նա իր պատմվածքներում ավելի շատ ներկայացրել է տղամարդուն, տղամարդկային ուժը, ցլամարտը որպես տղամարդկության բարձրագույն դրսևորում, պատերազմն ու զինվորին: Այս պատմվածքում, ճիշտ է երեք գլխավոր հերոսներից երկուսը տղամարդիկ են, սակայն հիմնական գործող անձը, գլխավոր հերոսը կինն է:

Պատմվածքը գրված է, սկսվում և ավարտվում է նույն տրամադրությամբ, որը պատմվածքի ընթացքին զուգահեռ աճում և ուժգնանում է: Այդ տրամադրությունը, պատմվածքի այդ մեկ ընդհանուր շունչը զգացվում է պատմվածքի հենց սկզբից. անծրևի սիմվոլի անդադար կրկնությունները, անծրևաջրերի փոքրիկ առվակները, ալիքների միանման վազը, ամայի հրապարակը, պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի գորշությունը: Այս բոլոր բառակապակցությունները ստեղծում են մի տեսակ մենակության, լքվածության, դատարկության մթնոլորտ, որը շարունակվում է մինչև պատմվածքի վերջին տողը: Պատմվածքը գրված է հիանալի լեզվով, այնպես, որ այն ընթերցելիս, կարծես անընդհատ լսվում է անծրևի ծայրը:

Այս պատմվածքում առհասարակ շատ են բառերի կրկնությունները, որը Հեմինգուեյի ամենսիրելի հնարաններից մեկն է: Սակայն նա երբեք ինքնանպատակ չի անում դա, այդ կրկնությունները երբեք պատահական չեն լինում, ընդհառակ դրանք միշտ ծառայում են որևէ կոնկրետ նպատակի՝ ստեղծում են պատմվածքի տրամադրությունը, ընդգծում են պատմվածքի տրամաբանական գիծը, շեշտում են որևէ սիմվոլ՝ հակակշռություն ստեղծելով մեկ այլ սիմվոլի համար:

Այս պատմվածքում որոշակի բառերի հաճախակի կրկնությունը հետապնդում է հենց այդ նպատակը: Այն միտված է ստեղծելու որոշակի կոնտրաստ: Այսպես պատմվածքում հերոսուհուն բնութագրելիս անընդհատ օգտագործվում է «Նա հավանում է... Նա հավանում է»: Այս բառակապակցության միջոցով ընդգծվում են երիտասարդ կնոջ վերաբերմունքը հյուրանոցի ծեր տիրոջ նկատմամբ: Սրան հակառակ ողջ պատմվածքի ընթացքում «Ես հավանում եմ» բառակապակցությունը երբեք չի օգտագործվում կնոջ վերաբերմունքն իր ամուսնու հանդեպ նկարագրելու նպատակով: Այս կոնտրաստը լի է գաղտնի, բայց միևնույն ժամանակ հեշտ ընկալելի իմաստով:

Բառերի հաճախակի կրկնությունները պատմվածքում տեղ-տեղ կարող են թվալ մի փոքր ծանծրալի, սակայն ընդհանուր առմամբ դրանք հրաշալիորեն ներդաշնակվում են պատմվածքի ընդհանուր տրամադրության մեջ:

Հենց սկզբից պատմվածքում նկատվում են թախծի և տխրության ելևէջներ, որոնք տող առ տող ավելի ու ավելի են ընդգծվում և իրենց գազաքնակետին են հասնում պատմվածքի վերջում: Չմայած որ տխրությունը մի տեսակ անհույս է, այն ամեն դեպքում ճնշող չէ: Թվում է, թե այդ տխրությանը վերջ չկա, և միայն մի պահ փոքրիկ կատվի հայտնվելով պատմվածքում, թվում է, թե հնարավոր է, որ ինչ-որ բան կարող է փոխվել, բայց շուտով պարզվում է, որ այդ վերջին հույսն էլ անիրականանալի է: Կինը պատուհանից տեսնում է սրճարանի սեղանի տակ մտած, ցրտից պատսպարվող փոքրիկ կատվին և իջնում է ցած նրան ներս բերելու, բայց երբ իջնում է ներքև, կատուն արդեն այնտեղ չի լինում: Ինչ-որ մի բան փոխելու նրա այս վերջին ցանկությունն էլ է հոդս ցնդում: Պատմվածքի այս հատվածի հատկանշական կողմն այն է, որ պարզ է դառնում կնոջ և ամուսնու վերաբերմունքը կյանքի նկատմամբ: Երկուսն էլ դժբախտ են, սակայն մեկի մեջ դեռևս կա ապրելու, ամեն բան վերափոխելու, պայքարելու ցանկությունը: Մինչ կինն իջնում է ներքև կատվին բերելու, ամուսինն առանց ուշադրություն դարձնելու շարունակում է թերթ կարդալ: Ամուսնու այս անտարբեր վերաբերմունքին հակակշռվում է հյուրանոցի տիրոջ հոգատար վերաբերմունքը կնոջ նկատմամբ: Տեսնելով կնոջը հյուրանոցից դուրս գալիս նա աշխատողի հետ անմիջապես անձրևանոց է ուղարկում: Եվ պատահական չէ, որ կնոջ և հյուրանոցի տիրոջ մասին խոսելիս մի քանի անգամ շեշտվում է վերը նշված «ես հավանում եմ» արտահայտությունը: Կինը շատ է հավանում հյուրանոցի տիրոջը, որովհետև ենթագիտակցորեն զգում է, որ նա միակն է, ով իր համդեպ տածում է քնքշանք և հոգատարություն:

Պատմվածքի սկզբից պարզ է դառնում, որ այս մարդկանց կյանքում ինչ-որ մի բան այն չէ, չնայած այդ մասին դեռևս ուղղակի ձևով չկա ոչ մի խոսք: Իր բոլոր ցանկությունների, անհանգստությունների և դժգոհությունների մասին հերոսուհին բարձրաձայնում է միայն պատմվածքի վերջում, երբ իր համար պարզ է դառնում, որ իր ամենահասարակ ցանկությունն անգամ չիրականացավ, ինչպես չէին իրականացել և չեն իրականանա մնացած բոլորը: Սակայն արդեն զգացմունքային այդ պոռթկումը անակնկալ չի լինում ընթերցողի համար, որովհետև ընթերցողը ենթատեքստով և սիմվոլիկայի օգնությամբ արդեն պատրաստ է լինում դրան և ինչ-որ չափով անգամ սպասում է այդ ամենին: Այս պատմվածքում շատ կարևոր դեր ունի իմաստային երկրորդ պլանը՝ քողարկված ենթատեքստային իմաստը, սակայն այն հնարավոր է բացահայտել միայն բուն տեքստի մեջ ընկղմվելուց հետո:

Այս պատմվածքը տարբերվում է նաև նրանով, որ ունի մի տեսակ Յեմինգուեյին ոչ հատուկ հուզականություն, որն այս դեպքում ես ընկալելի է միայն ենթատեքստի միջոցով:

Մնացած բոլոր առումներով այս պատմվածքը հեմինգուեյան արձակի տիպիկ օրինակ է գրված պարզ և հասկանալի լեզվով, առանց ավելորդ պերճախոսության, արտաքինից պարզ, իսկ ներքինով անչափ բարդ և հարուստ, իմաստային առումով կոնկրետ ուղորդված և միևնույն ժամանակ բազմիմաստ, պարզ ու մատչելի, բայց նաև խորքերը գնացող, բառերի հարցում բավական «ժլատ», բայց լի հասկանալի և գաղտնի իմաստներով: Իրականությունն օբյեկտիվ ձևով ներկայացնող այս պատմվածքը լի է խորը թաքցրած հուզականությամբ:

Տրտից դրսում դողացող թրջված կատվին սենյակ բերելու ցանկությունը պարզապես քմահաճույք չէ կնոջ համար, այլ սեփական դժբախտությունը մի փոքր մեղմելու մղում: Այդ ամենը ցանկության հետևում պատկերվում նրա սեփական կյանքի դրաման: Նա տաքանալու և պատսպարվելու անկյուն փնտրող կատվի հանդեպ զգում է ցավի ու խղճահարության զգացում, որովհետև ինչպես որ կատուն, այնպես էլ նա իրեն հարմարավետ չի զգում այս կյանքում, ունի ջերմության քնքշանքի կարիք: Նա ասում է, որ ինքն էլ չի հասկանում, թե ինչու էր այդքան շատ ուզում բերել իր մոտ այդ փոքրիկ կատվին, հետո հավելում է այդքան հաճելի բան, չէ լինել մի խեղճ կատու դրսում, միայնակ անծրևի տակ: Ենթագիտակցորեն նա իրեն մոլորացնում է կատվի հետ, և այն ամենը ինչ ցանկանում է անել կատվի հետ, ենթագիտակցորեն ցանկանում է, որ կատարվի իր հետ:

Նա ցանկանում է որ իրեն ջերմացնեն, քանի որ ինքը ես շատ է մրսում, ուզում է, որ իրեն ես շոյեն ու խնամեն, ինչպես որ ինքն էր ուզում գոգին դրած շոյել ու տաքացնել կատվին, ցանկանում է, որպեսզի իրեն էլ ինչ-որ մեկը հոգ տանի: Կատուն, ինչպես և հերոսուհին, լրիվ մենակ են այս աշխարհում: Կինը տանջվում է իր կյանքի դատարկությունից, անտարբերությունից, սիրո պակասից:

Կատուն պատմվածքի գլխավոր «հերոսն» է և պատահական չէ, որ պատմվածքում հանդես է գալիս երկու անգամ, սակայն տարբեր նշանակություններով: Կինը տանջվում է ընտանեկան երջանկության, երեխաների սիրո, տան ջերմության պակասից, և այդ խեղճ կատուն նրա համար դառնում է ընտանեկան հարմարավետության և համերաշխության խորհրդանիշը, երևույթներ, որոնց կարիքն ինքն այնքան շատ ունի իր առօրյայում: Ամենից շատ նա ուզում է սիրված լինել, բայց այդպես էլ չստանալով սիրո այդ բավարարվածությունը, նա ուզում է, որ գոնե ինքը կարողաճանա այն տալ ինչ- որ մեկին: Բայց անգամ իր այդ փոքրիկ ցանկությունը չի կարողանում իրականացնել:

Նրան վերջում բերում են կատու, հյուրանոցի տերն իմանալով, որ նա կատու է ուզեցել իր սենյակ տանել, նրան աշխատողի հետ մի ուրիշ կատու է ուղարկում: Նա ուշադրության, հոգատարության, նվիրվածության կարիք ունի, իսկ նրան բերում են ինչ-որ մի ուրիշ մեծ կատվի, իր բոլոր ցանկությունների խղճուկ փոխարինողին: Անգամ այստեղ նա ցանկանում է մի բան, փոխարենը ստանում լրիվ այլ բան:

Սրճարանից ձեռնունայն վերադառնալով իր սենյակը կինն այլևս չդիմանալով տխրությանը՝ պոռթկում է, սկսում է մեկ առ մեկ թվել իր բոլոր այն ցանկությունները, երազանքները, նպատակները, որոնք այդպես էլ չիրականացան: Ամուսինը սակայն, չի արծազանքում նրա ոչ մի խոսքին, ոչ այն պատճառով, որ նա կատարելապես անտարբեր է կոնկրետ հենց իր կնոջ հանդեպ, այլ առհասարակ նա անտարբեր է ամեն ինչի հանդեպ, նա ամեն ինչի հանդեպ հետաքրքրությունը կորցրած, ամեն ինչի հանդեպ ինքնուր մի մարդ է, նա վաղուց արդեն համակերպվել է իր այս անսեր, անկիրք, իմաստազրկված կյանքին, հակառակ իր կնոջը, ով դեռևս ցանկանում է և փորձում է ինչ-որ բան փոխել:

Եվ պատահակն չէ, որ վերադառնալով սենյակ, նա սկսում է խոսել այն բոլոր կենցաղային փոփոխությունների մասին, որ նա ուզում է ամեն իր կյանքում:

Նա ուզում է տարբեր կենցաղային իրեր՝ արծաթ պատառաքահաղ, մոմեր, մոր հագուստներ, բայց ամենից շատ նա ուզում է, որ գարուն լինի. նոր կյանքի, սիրո, զարթոնքի խորհրդանիշը: Կինը երկու անգամ նշում է, որ ուզում է իր մազերը երկար լինեն, ուզում է երկարացնել մազերը: Իրականում նա ցանկանում է, որ թեկուզ և աննշան, բայց ինչ-որ մի փոփոխություն լինի իր կյանքում: Այսինքն նրա մեջ դեռևս կա, երջանկության համար պայքարելու ցանկություն և ուժ, գուցե և նա ընտրել է շատ խղճուկ ճանապարհ, բայց նա գոնե պատրաստ է փոխելու ինչ-որ բան: Մազերը երկարացնելու նրա ցանկությանն ամուսինը պատասխանում է, որ «կարիք չկա, այսպես էլ լավ է»: Այդ մարդուն այլևս իր թերթից բացի ոչինչ չի հետաքրքրում: Նա ոչ ցանկություն, ոչ էլ ուժ ունի ինչ-որ բան փոխելու: Այս աշխարհում ամեն ինչի հանդեպ նա անտարբեր է. նրա մեջ կնոջ որևէ զգացմունքին փոխադարձ վերաբերմունքով պատասխանելու համար արդեն ուժ չունի: Եվ երբ կինը շարունակում է խոսել իր երազանքների մասին, նա կնոջը հրամայում է՝ ձայնը կտրել և կարդալու մի բան գտնել:

Իտալիայի հյուրանոցներից մեկում հանգրվանած ամերիկացի այս գույզն ամերիկյան «կորած սերնդի» տիպիկ ներկայացուցիչներից է: Նրանք ամեն բան կորցրած, անընդհատ տեղափոխությունների մեջ, աննպատակ ապրող և գլխավորը խորապես դժբախտ մարդիկ են: Նրանցից մեկը դեռևս

զգում է սեփական դժբախտությունը և տանջվում է դրանից, մյուսն արդեն համակերպվել է այդ ամենի հետ, բացրել է սեփական զգացմունքներն այնպես, որ էլ ոչինչ ի վիճակի չէ զգալու, ի վիճակի չէ զգալու անգամ իր կնոջ ներքին հոգևոր ողբերգությունը: Նա դա չի հասկանում անգամ այն բանից հետո, երբ կինը հուսահատ բարձրածայնում է նրա մոտ այդ մասին: Նա հրամայում է կնոջը լռել և ինչ-որ բան կարդալ ոչ այն պատճառով, որ նա վատ մարդ է և թե՛ անհիշատակ իր կնոջ զգացմունքների վրա, այլ այն պատճառով, որ նա այն աստիճան է անզգայացել առհասարակ ամենի ինչի հանդեպ, որ կնոջն այդպես հուզված և անմխիթար տեսնելուց հետո անգամ չի ընկալում, որ իր կինը դժբախտ է և այս աշխարհում ամենից շատ սիրո կարիք ունի, ոչ թե ընթերցանությամբ:

Հարց է ծագում ինչու էին այս երիտասարդ մարդիկ այսքան դժբախտ, ինչն է նրանց խանգարում երջանիկ լինելու: Այդ մարդիկ շատ վաղուց կորցրել են ինչ- որ բան, կորցրել են իրենց երիտասարդությունը: Պատերազմը փոխել է ամեն բան, և պատերազմից հետո նրանք՝ այդ «կորած սերունդը», այլևս չկարողացավ վերագտնել իր նախկին կյանքը: Պատերազմից հետո սկսվել էր նրանց համար խորթ և օտար մի նոր կյանք՝ իր նոր բարբերով և օրենքներով, և այդ նոր կյանքում նրանք այլևս չգտան իրենց, նրանք այդտեղ արդեն տեղ չունեին: Չօրինակելով այդ նոր ներկային՝ նրանք փախչում էին Եվրոպա, բայց այնտեղ էլ նրանց սպասում էր նույն իմաստազրկված կյանքը: Այդտեղ նրանք երբեք չէին դառնում յուրային, և ամեն բան նրանց համար և իրենք էլ բոլորի համար մնում էին օտար: Նրանք իրենց անցյալը կորցրած, դատարկ ներկայով և ապագայի հանդեպ առանց որևէ ապաստիքի, առանց երազանքի մարդիկ էին: Նրանք կորցրել էին գլխավորը՝ իրենց ժամանակը: Իրենց ապրելու ժամանակը համընկավ պատերազմի հետ, և պատերազմը խլեց նրանցից իրենց ժամանակը, իսկ պատերազմից հետո արդեն նոր ժամանակներ էին, որտեղ «կորած սերունդը» արդեն տեղ չունեի և արդեն երբեք էլ չէր ունենալու:

«Կատուն անծրևի տակ» պատմվածքի վերջում մի պահ թվում է, թե մոտ է այն պահը, երբ կկատարվի կնոջ ցանկությունը, նրան կբերեն կատվին, սակայն բացելով դուռը՝ նա աշխատողի ձեռքին տեսնում է լոխվ ուրիշ, մեկ այլ կատվի: Այսպիսի վերջի փոխաբերական իմաստն այն է, որ նրանց կյանքում այլևս ոչինչ չի փոխվելու, ոչ մի երազանք իրականություն չի դառնալու: Այդ սերունդն իրոք որ կորած էր, և այդ «կորած սերունդի համար» արդեն չկա ոչ մի փրկություն: